Եւ յայն ինչ եհաս հրաման արքայի աւետաւոր յաղագս շինման տաճարին եւ ի վաղիւն՝ որ էր օր Միաշաբաթի առաքեցաւ իշխանն Հիւսանց Ճարտարաց որ ասի Մէյմ-որ-ղ, որում անունն էր Արիք աղա ճանաչիւր[1], ընդ որում էր եւ ճարտարապետ սմին քաղաքացի Մինաս անուն կոչեցեալ, առ ի զննել զվայրն, որպէս սովոր են, առ որ յանձնեցաւ շինութիւն տաճարիս ըստ հաճոյից կամաց իւրեանց եւ ի վաղիւն հրաման ետ բրել զհիմունս Նորա, եւ նախ առաջին Դանիէլ եպիսկոպոսն քաղաքիս առեալ ի ձեռս օրհնութեամբ զբրիչ գործի՝ եւ եհատ նովաւ զչորս կողմունս աւերակին առ ի բարեյաջողութիւն առաջիկայ գործոյն յԱստուած յուսացեալ։ Եւ յետ -ՐԻՆ Շ-ԲԱ-Ռ-Ց Յ-Ռ Է-Լ-Ա-Լ իբր աւարտելոյ ձեռնտուեալ շինութիւն տաճարիս, շքեղ եւ փառաւոր, հոյակապ եւ զարմանալի կամարաձեւ յօրինեալ, կրաման սպիտակ եւ պայծառ բոլոր ամենայնի գեղեցիկ, իբրեւ զհիացումն կարգեալ տեսողաց։

Եւ յաւուր երեքտասաներորդի Նոյեմբեր ամսոյն չոքաւ Պատրիարք քաղաքիս Դանիէլ վարդապետ եւ մեծահանդէս տօնախմբութեամբ կատարեաց զնաւակատիս օրհնութեան օծման նորակերտ տաճարիս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւ կենդանի նահատակին իւրոյ սրբոյն Գրիգորի. որ է օրհնեալ յաւիտեան. ամէն

---

1 Ի լուսանցս Պառայ Մէյմար Ի (?) Նու։